



ՀՈԳԵՒՈՐ ՊՐԻՍՄԱԿ SPIRITUAL SPECTRUM

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԻՍՒՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
A PUBLICATION OF THE WESTERN PRELACY OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Editors: Very Rev. Father Muron Aznikian and Deacon Khatchig Shannakian
6252 Honolulu Ave., La Crescenta, CA 91214, Tel:(818) 248-7737/8 Fax: (818) 248-7745
E-mail: info@westernprelacy.org, www.westernprelacy.org

Ժ. ՏԱՐԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 2014 - ՅՈՒՆԻՄԱՐ 2015, ԹԻՒ 3



17th YEAR, OCTOBER 2014 - JANUARY 2015, No. 3





ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆՂԵԱՆ ՊԱՏՊԱՆՈՒԹԵԱՆ

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՐԵՐԸ՝ ԱԲԵՏԻՍ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ

Դարձեալ Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան հոգեպարար շրջանը կ'ապրինք եւ մեր սրտերը լի են ցնծութեամբ, նոր տարուան մը ծնունդին ընդառաջ, որ իր հետ կը բերէ նոր սկիզբ մը, նոր երազներ եւ նոր յոյսեր, եւ մեր հոգիները Աստուածայայտնութեան խորհուրդով գօտեակնդուած, սեր եւ խնդութիւն կը վայելեն:

Դարեր առաջ, աշխարհին յայտնուած մեծ եւ սքանչելի խորհուրդը անգամ մը եւս մեր սրտերուն եւ հոգիներուն մէջ պիտի յայտնուի, աստուածային սիրոյ օրհնութեամբ եւ հաճութեամբ հարստացնելով մեր կեանքը:

Բեթղեհեմի համեստ մտւրին մէջ, աւելի քան 2000 տարիներ առաջ, մարդկութիւնը ստացաւ անպատմելի պարգեւ մը, որ իբրեւ խաղաղութեան լոյս եւ արդարութիւն աշխարհ եկաւ ու լուսաւորեց խաւար աշխարհը: «Այսօր արեւ արդարութեան երեւեցաւ ի մէջ մարդկան, աւետիս» (Ժամագիրք): Այդ լուռ ու սուրբ գիշերուան մէջ, Աստուծոյ փրկարար ծրագիրը մարդկութեան շնորհուեցաւ:

Ս. Ծննդեան շրջանը յիշեցում մըն է բոլորիս, որ Աստուած ինքզինք ընծայաբերեց մեզի, Յիսուս Մանուկով, եւ մեզի պարգեւեց լոյս մը, որ ո՛չ մէկ տեսակի խաւար կրնայ մթազնել: Բեթղեհեմի Աստղը ո՛չ միայն մութ երկինքը լուսաւորեց, այլ նաեւ՝ մարդուն սիրտն ու հոգին, աւետելով մեր փրկչին ծնունդը, որ աշխարհ եկաւ մեզի ցոյց տալու սիրոյ, խոնարհութեան, հնազանդութեան, համբերութեան, հաւատքի, խաղաղութեան եւ հաճութեան նոր ճանապարհ մը: Արդարեւ, այս պատգամը գեղեցկօրէն մարմնաւորուած է Ս. Ծնունդով:

Անսահման սերը՝ Աստուծոյ ինքնընծայումով, որ իր միածին Որդին տուաւ, խոնարհութիւնը՝ Աստուծոյ Որդւոյն խանձարուրով ու համեստ մտւրով օրինակուած, հնազանդութեան ու համբերութեան առաքինութիւնը՝ Յովսեփով ու Մարիամով մարմնաւորուած, հաւատքը՝ համեստ հովիւներով արտայայտուած, որ զիրենք արժանացուց խաղաղութեան ու հաճութեան առաջին աւետիսը ստանալու առանձնաշնորհումին, հրեշտակներուն աստուածային փառաբանութեամբ եւ երկնային երգակցութեամբ:

«Փառք ի բարձունս Աստուծոյ...»

Փառք Տիրոջ Օծեալին, որ աշխարհ եկաւ ոչ թէ դատելու, այլ՝ փրկելու: Ան աշխարհ եկաւ մեղաւորները ազատագրելու, գերեալները ազատելու, հիւանդները բժշկելու, աղքատներուն փրկութեան աւետիսը տալու, սգաւորները եւ սրտաբեկները մխիթարելու, եւ հարստահարուածները ազատելու եւ անարդար աշխարհի մէջ արդարութիւնը վերահաստատելու. «Վասնզի մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ... Անոր անունը պիտի կոչուի Սքանչելի, Խորհրդակից, Հօգօր Աստուած, Յաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան: Դաւիթի աթոռին վրայ ու անոր թագաւորութեանը վրայ, Անոր իշխանութեանը մեծնալուն եւ խաղաղութեանը սահման չկայ, որպէսզի հիմակուրնէ մինչեւ յաւիտեան իրաւունքով ու արդարութեամբ հաստատէ զանիկա» (Ես. 9:6-7):

Այնպէս՝ ինչպէս Յիսուս Քրիստոսի երկրաւոր առաքելութեան օրերուն, այսօր եւս աշխարհը լեցուն է պայքարներով, խառնակ վիճակներով եւ անարդարութեամբ: Չար ուժեր կը փորձեն իրենց տիրապետութիւնը հաստատել, պատճառ դառնալով անմեղ ժողովուրդին անտանելի տառապանքներուն: Որեւէ անարդարութիւն անարգանք է Աստուծոյ, որ պատճառ կը հանդիսանայ Յիսուս Քրիստոսի լոյսով շնորհուած հաւատքի, յոյսի եւ սիրոյ տկարացման:

Հայ ժողովուրդը անձանօթ չէ անարդարութեան. սակայն հակառակ բազմաթիւ



ներխուժումներու, գրաւումներու, մահուան ու քանդումի, տոկաց եւ վերապրեցաւ, շնորհիւ իր հաւատքին, լեզուին եւ մշակոյթին, զորս պահեց անաղարտ: Մեռանք, բայց չկորսուեցանք, որովհետեւ մենք միայն չենք ապաւինիր մեր ուժերուն, այլ նաեւ Աստուծոյ ամենակալ զօրութեան:

2015 տարին նշանակալից տարի մըն է մեր ժողովուրդին համար, երբ մենք ազգովին, ամբողջ աշխարհի տարածքին, պիտի միանանք նշելու հայոց Ցեղասպանութեան 100ամեակը, եւ արդարութիւն պահանջելու մեր ժողովուրդին դէմ գործադրուած անարդարութեան համար: Թէեւ 100 տարիներ անցած են, սակայն մենք երբեք չենք վիատած, որովհետեւ իբրեւ հաւատաւոր Զրիստոնէաներ, գիտենք ապաւինիլ Աստուծոյ եւ Ան մեզ կը փրկէ: Երբ զգանք, որ յոյսի դռները փակուած են, Աստուած անպայման ելք կը գտնէ:

Մեր Տիրոջ եւ Փրկչին ծնունդը այս ճշմարտութեան մեծագոյն յայտնութիւնն է, որովհետեւ երբ մարդկութիւնը խաւարի մէջ էր, Աստուած Իր Միածին Որդին ղրկեց, որ աշխարհը իր միջոցով փրկուի, «քանզի Տերը արդար Աստուած մըն է» (Եւ. 30:18):

Մեր նախնիք դիմեցին Աստուծոյ եւ Իրեն ապաւինեցան, որ հաւատք եւ ոյժ շնորհեց տոկալու, յարատեւելու եւ վերստին վերականգնելու: ՉԱստուած մեզի հետ ունենալով, մենք յաջողեցանք վերատիրանալ մեր անկախութեան, ապահովեցինք Արցախի ազատագրութիւնը, եւ դարձեալ Աստուծոյ օգնութեամբ պիտի յաջողինք մեր նահատակներուն հոգիները խաղաղեցնել ցեղասպանութեան միջազգային ճանաչումով եւ արդարութեան հատուցումով:

Աստուած պահեց եւ պահպանեց մեզ, մեր ժողովուրդի կեանքի ուղին դարերով առաջնորդեց, եւ վստահ կրնանք ըլլալ, որ այս հանգրուանին եւս, Ան մեզ պիտի առաջնորդէ: Մեր յոյսն ու վստահութիւնը ամենակալ Աստուծոյ վրայ դնելով՝ պիտի շարունակենք մեր արդար պայքարը հետապնդել, այն համոզումով որ Արդարութեան Արեգակը մեզ պիտի առաջնորդէ մեր յաղթանակին եւ արդարութեան. ազգովին պիտի պայքարինք անարդարութեան ու ճնշումին դէմ, մեր Տիրոջ օրինակով, որ իբրեւ պաշտպան ժողովուրդներուն եւ ջատագով արդարութեան աշխարհ եկաւ:

Սիրելի հարազատներ,

Ս. Ծննդեան տօնը հրաշալի ժամանակ է, տարուան ամենէն սքանչելի շրջանը՝ մանուկին ու չափահասին համար հաւասարապէս: Այս շրջանին, մեր կեանքի մթնոլորտին մէջ խաղաղութիւն եւ ցնծութիւն կը տիրէ, որ մեզի մանկութիւն յիշեցնող տօնական ուրախութիւն կը բերէ: Մարդիկ աւելի ազնիւ վերաբերմունք կը ցուցաբերեն իրարու հանդէպ, բարեսրտութեան ոգին կը ծաղկի մարդոց ետեւեւան մէջ: Հետեւաբար, եղբայրասիրութիւնը, համերաշխութիւնն ու բարի կամեցողութիւնը պէտք է առաջնորդեն մեր կեանքը, որովհետեւ Յիսուս չճնաւ մէկ օրուան համար, այլ Ան ամէն օր մեր սրտերուն մէջ պէտք է ծնի: Ջանանք, որ մեր Տիրոջ Ս. Ծնունդով սկիզբ առած բարութիւնն ու ողորմածութիւնը մեր կեանքերուն մէջ շարունակուին ամէն օր, աստուածային սերն ու ողորմութիւնը տարածենք Երկնաւոր Հօր բոլոր զաւակներուն միջեւ, հետամուտ ըլլանք արդարութեան ու ճշմարտութեան, մասնաւորաբար ի ծառայութիւն անպաշտպանին ու ճնշուածին: Յիսուս աշխարհ եկաւ իբրեւ տիպար օրինակ մեր կեանքին: Ան մեզի սորվեցուց թէ ինչպէս պէտք է ապրինք.- «Իրաւունք ընել, ողորմութիւն սիրել, ու խոնարհութեամբ Աստուծոյ հետ քալել» (Միք. 6:8):



Եկե՛ք ուրեմն, միասնաբար տօնենք մեր Փրկչին Ս. Ծնունդը եւ Աստուածայայտնութիւնը, մաղթելով, որ Ան վերստին ծնի մեր սրտերուն մէջ եւ մեզ վերանորոգէ նոր կեանքով: Աղօթենք, որ Ան մեզ հարստացնէ իր շնորհքներով, եւ առաջնորդէ մեզ իր փառքին համար, խոնարհութեամբ եւ արդարութեամբ ծառայելու Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ պայծառութեան ու մեր Դատին իրագործման համար: Աղօթենք, որ Մանկացեալ Փրկիչը աշխարհի ժողովուրդները առաջնորդէ իր ճշմարտութեան ու արդարութեան ճանապարհով, որպէսզի աշխարհն ամբողջ վերագտնէ իր խաղաղութիւնը, որ արդարութեան պտուղն է:

Նոր Տարուան եւ Աստուածայայտնութեան տօներու սեմին, մեր լաւագոյն բարեմաղթութիւնները կը յղենք մեր հոգեւոր դասուն, ժողովականութեան, ծխական շրջաններուն, մեր վարժարաններուն, ազգային մեր մարմիններուն, միութեանց ու կազմակերպութեանց եւ հաւատացեալ ժողովուրդին, աղօթելով, որ Մանկացեալ Աստուածորդին առողջութեան ու յաջողութեան բարիքներով լեցնէ տարին, մեր անձնական ու հաւաքական կեանքին մէջ, մեր ժողովուրդին ու ամբողջ աշխարհին համար: Թող որ մանկացեալ Աստուածորդւոյն սերն ու խաղաղութիւնը բոյն դնեն մարդոց սրտերուն մէջ, որպէսզի վերջ դրուի մարդկութեան տառապանքին եւ անարդարութեան, 2015 տարուան ընթացքին, եւ անդին:

**Շնորհաւոր Նոր Տարի
Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ**

Սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթարար՝

Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ
Ա. Ս. Նահանգներու Արեւմտեան Թեմի

Ամանոր եւ Ս. Ծնունդ, 2015



PRELATE'S NEW YEAR AND CHRISTMAS MESSAGE

THE BIRTH OF THE SUN OF JUSTICE

Once again we find ourselves amid the blessed Christmas season, our hearts abound with joy at the dawning of a New Year which brings with it new beginnings, new dreams, and new hopes, and our souls are heartened by the Birth of our Lord Jesus Christ, radiating love and cheer around us. The “Great and Marvelous Mystery” revealed to the world centuries ago is once again revealed in our hearts and souls, endowing us with divine blessings of love and harmony. In that manger in Bethlehem over two thousand years ago, mankind received an indescribable gift as the Light of peace and justice permeated the world and illuminated a darkened world. “Today the Sun of Justice arose among man, good tidings!” (Armenian Christmas Hymn).

What transpired on that silent and holy night was the birth of God’s redemptive plan for mankind. Christmastime is a reminder that the Lord gave Himself to us in Baby Jesus, and brought to us a Light that no darkness can overcome. The Star of Bethlehem illuminated not only the night sky, but also the depths of man’s heart and soul, heralding the Birth of our Savior Who came to show us a new way of love, humility, obedience, patience, faith, peace, and goodwill. This message is embodied beautifully in the Holy Birth; boundless love as demonstrated by God giving His one and only Son, humility exemplified in the King of Kings coming into this world as a baby in a modest manger, obedience and patience personified by Joseph and Mary, faith represented by the shepherds who were rewarded with the privilege of being the first to receive the good tidings, peace and goodwill among all as proclaimed by the angel and the multitude of heavenly host trumpeting glory and praise to God.

“Glory to God in the Highest” indeed, for the Anointed One Who came not to judge but to save, to liberate sinners, free the slaves, heal the sick, lift up the poor, comfort the bereaved, elevate the fallen, act on behalf of the powerless, and restore justice to a unjust world, “For unto us a Child is born, unto us a Son is given...and His name will be called Wonderful, Counselor, Mighty God, Everlasting Father, Prince of Peace. Of the increase of His government and peace there will be no end, upon the throne of David and over His kingdom, to order it and establish it with judgment and justice” (Isaiah 9:6-7). Just as in the time of Jesus, today too the world is filled with strife, unrest, and injustice. Malicious forces are attempting to assert their authority, causing untold suffering among innocent peoples. Injustice of any kind is an affront to God, for it is an attempt to dim the faith, hope, and love brought forth by the Light of our Lord Jesus Christ.

The Armenian people are certainly no stranger to injustice, but despite the multiple invasions, confiscation of lands, death and destruction, we survived, with our faith, language, and culture intact. We died, but we did not perish, because we place our faith not in our own power, but in the supreme power of God. The year 2015 is a significant one for our nation as we will commemorate the centennial of the Armenian Genocide and seek justice for the wrongs committed against our people and nation. After all the time that has passed, it can be easy to feel disparaged. We cannot and will not lose heart however, for as faithful Christians we know to call upon the Lord, and He will deliver us. When it seems like we have reached a dead-end, God opens a door. The Birth of our Lord is the greatest manifestation of this truth, for when mankind was at its darkest, God sent His Son so that the world might be saved through Him, “For the Lord is a God of justice” (Isaiah 30:18).



Our forefathers called upon our Lord, Who granted the faith and strength to persevere and to rise again and again. With God on our side we succeeded in regaining our independence and securing the liberation of Artsakh, and with God on our side we will succeed in bringing peace to the souls of our martyrs through universal recognition and just reparation. The Lord has sustained and guided us as a people for centuries, and we can be certain that He will lead us at this crossroads too. We will continue to pursue our rightful demands with the conviction that the Sun of Justice will lead us to victory and righteousness, and we will fight injustice and oppression against all, in the example of our Lord Who came as an advocate for all peoples of all nations.

Dear faithful,

Christmas is a miraculous time; it truly is the most wonderful time of the year for young and old alike. During this time of year there is a certain peace and merriment in the air, and childlike wonder at the joy and festivities of the season. People are kinder to one another, the spirit of charity flourishes deep in our souls. This feeling of brotherly love, harmony, and goodwill should remain at the forefront of our lives throughout the year, for Jesus is born not only on Christmas, but in our hearts daily. We should be striving every day to carry on the work initiated by the Birth of our Lord, to spread His love and mercy among our fellow children of God, and to pursue justice and righteousness for the voiceless and defenseless especially. Jesus came as a model of holy living, He showed us the true way and what is required of us in this life, “to do justly, to love mercy, and to walk humbly with Him” (Micah 6:8).

As we celebrate His Holy Birth this Christmas, may He be born anew in our hearts and generate new life within us. May He pour His grace upon us and lead us to serve humbly and faithfully for His glory, for the splendor of the Armenian Apostolic Church, for the prosperity of our homeland, and for the fulfillment of our national cause. And may He guide the nations of the world in the way of His truth and justice, establishing among them peace which is the fruit of righteousness.


At the commencement of a New Year, we convey our best wishes to our clergy, councils, parishes, schools, committees, and faithful parishioners, praying for the blessings of health, happiness, and prosperity for all God’s children. May the love and peace of the Holy Infant take hold in people’s hearts and bring an end to human suffering and injustice in the year 2015 and beyond.

**Christ is Born and Revealed
Blessed is the Revelation of Christ
Good tidings to all**

Prayerfully

Archbishop Moushegh Mardirossian
Prelate, Western United States

New Year and Christmas, 2015



Too little is known of the Bible, although much is known about it. Every young boy and girl, and of course adult, should know the particulars of the Bible and its books, as brought out in these questions and answers. No Sunday school teacher is properly equipped for his/her work unless he/she can answer them. Juniors should be drilled on the questions until they know them, and most likely the answers will stay with them through life.

SEARCH QUESTIONS FROM THE BIBLE (Continued from last issue)

1. How do we know all men must die?
The Bible says, "Everyone must die once, and after that be judged by God" (Heb.9:27).
2. What is death?
Death is separation of the soul from the body.
3. What becomes of the body after death?
After death the body returns to the earth from where it was created and becomes dust again.
4. Should death be a terror to men?
No. Death is not a terror for the righteous.
5. What other kind of death is there besides physical death?
Besides the physical death there is spiritual death.
6. How long does the soul live in eternity?
The soul lives forever in eternity.
7. When will man receive an immortal body?
At the resurrection man will receive an immortal body.
8. Who has already received his full immortality?
Jesus Christ received his full immortality.
9. Will our earthly body that went to dust ever be used again by the soul?
Yes. Our earthly body will be changed into our immortal body.
10. What heavenly beings are already immortal?
The angels are already immortal.
11. Where do the souls of the righteous go at death?
At death, the souls of the righteous go to paradise.
12. What kind of place is paradise?
Paradise is a place of happiness and joy.
13. Where do the souls of the wicked go at death?
At death, the souls of the wicked go to a place of punishment. Their souls will be tormented, suffer until the day of Last Judgment.
14. Why are they held in this place of punishment?
They are held in this place of punishment because of their sins.
15. How long will the righteous and the wicked remain in these places?
The righteous and the wicked will remain in these places until the day of Judgment.



16. When will Christ return to judge the earth?

No one knows when Jesus Christ will come but God the Father. The Gospel teaches us: "No one knows the day and the hour of His coming, -neither the angels in heaven nor the Son; the Father alone knows" (Matthew 24:36).

17. Whom will Jesus Christ bring with Him when He comes?

When Jesus Christ comes He will bring with Him the angels, and souls of the departed. The Gospel is clear in this matter where we read: "He will send out His angels to the four corners of the earth, and they will gather His chosen people from one end of the world to the other" (Matthew 24:31).

18. Where will He appear?

He will appear in the clouds of heaven. The Gospel is clear in this matter when declares: "All the peoples of earth will weep as they see the Son of Man coming on the clouds of heaven with power and great glory" (Matthew 24:30).

19. What will the righteous do when Jesus Christ comes?

When Jesus Christ comes, the righteous will praise Him and rejoice.

20. What will the wicked do when Jesus Christ comes?

When Jesus Christ comes the wicked will try to hide from Him.

Աստուածաշունչի դասապահեր առաջնորդողներու կը տրամադրենք աստուածաշնչական սիւթերու եւ գիտելիքներու աշխատանքային օգտակար սոյն ծրագիրը:

**ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՆԻԹԵՐՈՒ ԵՒ
ԴԱՍԱԲԱՆԴՈՒԹԵԱՆՑ ՆԱԽԱԳԻԾ
(Շարունակութիւն նախորդ թիւէն)**

ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԴ

Բ.- Ի՞նչ են վերստին ծննդեան հետեւանքները:

Անցեալ թիւով, աւետարանական հատուածներով, տեսանք թէ վերստին ծնունդը քրիստոսի հաւատալ է եւ որպէս Տէր ու Փրկիչ խոստովանիլ, ընդունիլ եւ վկայել է: Վերստին ծնունդ ունեցողը քրիստոսով հոգեւորապէս կը վերանորոգուի, իր հին մեղանչական բնութիւնը հոգեւոր նոր բնութիւն կը զգենու եւ նոր արարած կ'ըլլայ: Մեղքի մէջ մահացածները, վերստին ծնունդով, հոգեփոփոխութեան ենթարկուելով, մահէն դէպի հոգեւոր նոր կեանքի կը բացուին: Քրիստոնէական հասկացողութեամբ, վերստին ծնունդը մտքի, խորհուրդներու, զգացումներու եւ ապրելակերպի վերանորոգում է: Հոգեւոր նոր բնութիւն զգեցած մարդը հաղորդակից կը դառնայ Աստուծոյ բնութեան հետ:

Հետեւաբար, ան որ վերստին ծնած է Աստուծոյ Ս. Հոգիէն՝ տաճար եւ բնակարան կը դառնայ Աստուծոյ: Թէեւ ան իր նախկին ֆիզիքական բնութեան մէջ կ'ապրի, սակայն մեղքը նուաճած՝ անոր իշխանութեան, մղումներուն, ձգտումներուն եւ պահանջներուն ներքեւ է՝ ապրիր: Քրիստոսի ու Անոր հոգեւոր զօրութեան ապաւինելով, հնարաւոր կը դառնայ մեղքի տիրապետութենէն ձերբազատիլ, որով մեղքը կը յաղթուի եւ կը նուաճուի: Պողոս առաքեալ այս մասին անդրադառնալով, քրիստոնէական հաւատքը ընդունած կորնթացիները կը զգուշացնէ, յիշեցնելով. «Չ'էք գիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք, եւ Աստուծոյ Հոգին կը բնակի ձեր մէջ, Ձեր մարմինները տաճարն են Ս. Հոգիին որ Աստուծմէ առիք եւ ձեր մէջ կը բնակի: Գիտցէք, որ դուք չ'էք ձեր անձերուն տերը, այլ Աստուած՝ որ փրկագինով ձեզ գնեց: Հետեւաբար, այնպէս ապրեցէ՛ք՝



որ Աստուած փառաւորուի ձեր մարմիններով» (Ա. Կորնթացիս 3:16, 6:19-20): Ապա Առաքեալը մարմնական ցանկութեամբ ապրողները կը զգուշացնէ խրատելով. «Անոնք որ միայն իրենց մարմնական պահանջներով կը ղեկավարուին, անոնց մտածելակերպը մարմնական է. մինչդեռ անոնք, որ Հոգիին թելադրած ձեւով կ'ապրին, անոնց մտածելակերպը հոգեւոր է: Մարմնականը խորհիլը մահ կը պատճառէ, մինչ հոգեկանը խորհիլը՝ կեանք եւ խաղաղութիւն: Մարմնականին կառչած միտքը Աստուծոյ թշնամի է, որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն չի հնազանդիր, ո՛չ ալ կրնայ հնազանդիլ: Ահա թէ ինչու, անոնք որ մարմնականին կը հետեւին՝ Աստուծոյ հաճելի չեն կրնար ըլլալ: Եթէ իրապէս Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, կը նշանակէ՝ թէ դուք այլեւս մարմնական ցանկութիւններուն համաձայն չէք ապրիր, այլ՝ Սուրբ Հոգիին կամեցած ձեւով: Իսկ ով որ Զրիստոսի Հոգին չունի, անոր չի պատկանիր: ...Որովհետեւ եթէ մարմնաւորապէս ապրիք՝ պիտի մեռնիք. իսկ եթէ Հոգիին օգնութեամբ ձեր մեղքերը սպաննէք՝ պիտի ապրիք» (Հռոմայեցիս 8:5-9, 13):

Ըստ Պետրոս առաքեալին, վերստին ծնածը՝ նորածին մանկան պէս է, հոգեւորապէս աճելու համար, հոգեւոր սնունդի պէտք ունի: Չսայթաքելու եւ չմոլորելու համար, առաքեալը հաւատացեալները կը խրախուսէ, որ հետամուտ ըլլան Աստուծոյ խօսքին, ուսուցումներուն եւ նուիրուին Ս. Գրոց ընթերցման. «Մէկդի՛ ձգեցէք ամէն տեսակի չար մտածում ու նենգութիւն, կեղծաւորութիւն ու նախանձ, եւ ամէն տեսակի չարախօսութիւն: Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ խօսքին անխարդախ կաթին փափաքեցէք, որպէսզի անով աճիք եւ փրկութեան հասնիք» (Ա. Պետրոս 2: 1-2): Իսկ Պօղոս առաքեալ հրաւեր եւ կոչ կ'ուղղէ, որ հաւատացեալներ, հոգեւորապէս աճելու եւ հաւատքի մէջ չափահաս դառնալէ ետք, Աստուծոյ ծառայութեան եւ Աւետարանի քարոզութեան նուիրուին, որպէսզի Զրիստոսի մարմինը՝ եկեղեցին, աճի ու զօրանայ եւ բոլորը հասնին հաւատքի չափահասութեան, Զրիստոսի կատարեալ նմանութեան: «Որպէսզի ասկէ ետք չնմանիք երեխաներու, որոնք ալիքներու հետ կը տարուբերին եւ զանազան վարդապետութեանց հովերէն կը քշուին խաբէբայ մարդոց կողմէ, որոնք խորամանկ հնարքներով կը խաբեն ու կը մոլորեցնեն: Այլ՝ ապրինք ճշմարտութեան համաձայն, սիրով, եւ հետզհետէ աճինք Զրիստոսի հետ մեր միութեան մէջ, որովհետեւ Ի՛նքն է գլուխը» (Եփեսացիս 4:14-15):

Վերստին ծնածը՝ հոգեփոխուած, բարեշրջուած ու նոր մարդ է գիտութեամբ եւ Աստուծոյ պատկերին նմանութեամբ: Ան կը հաւատայ թէ Յիսուս Զրիստոսն է իր փրկիչը, ու կ'ապրի Ս. Հոգիի հնազանդութեան, ազդեցութեան եւ սիրոյն ներքեւ: Մկրտուած ու նորոգուած կեանքով, վերստին ծնածը կը ջանայ մեղք չգործել, կ'աշխատի, որ իր կեանքը մեղքով չտիրապետուի, ո՛չ ալ մեղքի մէջ յարատեւէ, այլ իր կեանքը Զրիստոսով տիրապետուի, արդարութիւն գործէ ու հետամտի բարութեան եւ առաքիկի կենցաղի: Պօղոս առաքեալ, հաստատելով այս մտածումները, կը քաջալերէ, որ Ս. Հոգիի պարգեւներով օժտուած եւ Մկրտութեան Ս. Աւագանէն վերածնած հաւատացեալները աստուածճանաչութեան մէջ զարգանան, սրբուին, հոգիով վերանորոգուին եւ Աստուծոյ որդիները ըլլան: «Մոռցէ՛ք ձեր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նոր մարդ եղէք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի կարենաք գինք ճանչնալ» (Կողոսացիս 3:10): «Եթէ զԱստուած կը սիրենք եւ Անոր պատուիրանները կը կատարենք՝ կը նշանակէ, թէ կը սիրենք նաեւ Աստուծոյ զաւակները: Արդարեւ, Աստուծոյ հանդէպ մեր սերը կ'արտայայտենք՝ Անոր պատուիրանները գործադրելով: Իսկ Անոր պատուիրանները գործադրելը դժուար չէ, որովհետեւ ով որ Աստուծմէ ծնած է՝ կը յաղթէ աշխարհին: Եւ աշխարհին վրայ յաղթանակ տանողը մեր հաւատքն է» (Ա. Յովհաննէս 5:2-4): «Աստուած զինք ընդունողներուն եւ Իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմնի կամ մարդկային կամքով, այլ՝ Աստուծմէ ծնելով» (Յովհաննէս 1:12-13):

ՄԻՒՌՆ Ծ. ՎՐԴ. ԱԶՆԻԿԵԱՆ

Յաջորդիլ՝ «Անիրաժե՞շտ եւ կարելո՞ր է Վերստին Ծնունդը»:



ԼՈՒՐԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԵՆ

ՈՃՐԱՅԻՆ ԱՐԱՐՔՆԵՐ ԶԵՆ ԿՐՆԱՐ ԱՂԱՐՏԵԼ ՆԱԶԱՏԱԿՆԵՐՈՒ ԿՏԱԿԻՆ ՄԵՐ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆԸ

«Ցեղասպանութեան զոհ գացած մեր նահատակներուն յիշատակն ու անոնց կտակին յանձնառութիւնը ոչ մէկ ձեւով կրնան աղարտիլ ու տկարանալ՝ Տէր Զօրի նահատակաց Մատրան ականահարման դէպքին հետեւանքով. նման ոճրային ու բարբարոս արարքներ մեզ առաւել եւս կ'ամրապնդեն, որպէսզի արթնութեամբ շարունակենք պահանջատիրութեան երթը եւ Ցեղասպանութեան 100ամեակը վերածենք մեր արդար Դատի կենսագործման պատմական հանգրուանի», յայտարարեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, ի լուր 21 Սեպտեմբերին, Տէր Զօրի համալիրին՝ Ս. Նահատակաց Մատրան ու անոր կողքին գտնուող թանգարանին ռմբահարման: Առաջնորդ Սրբազանը նշեց, որ «մեր նահատակներուն յիշատակը վառ պահող եւ հայութեան պահանջատիրութիւնը խորհրդանշող կոթողներն ու մեր դարաւոր մշակոյթի արտայայտութիւնները առաջին անգամ չէ, որ ոճրային ու խափանարարական արարքներու զոհ կ'երթան: Անցեալին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աստուածածին վանքին կողքին, Պիքֆայայի մէջ կանգնած Նահատակաց Յուշարձանը եւս զոհ գացած էր ռմբային ոճրափորձի մը, սակայն այսօր, անկկա վերանորոգուած է ու երկինք կը սլանայ պահանջատեր հայութեան բռունցքներուն պէս»: Ան նկատել տուաւ, որ մուլեռանդ կրօնամուկներու կողմէ գործադրուած այս ոճիրին ետին, անկասկած որ կը կանգնի հայութեան թշնամին, ու մեր արդար սպասումն է, որ այս ու նմանօրինակ ոճիրներ իրենց դիմաց միայն դատապարտումի խօսքեր չգտնեն, այլ արդարութիւնը յաղթանակէ գործնապէս:

ՖՐԵՉՆՈՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԵԶ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՏԱՐՈՒՄԱՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Կիրակի, 28 Սեպտեմբեր 2014ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ

Ս. Արք. Մարտիրոսեան հանդիսապէս եղ Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ փոխանցեց իր պատգամը, ապա նաեւ նախագահեց «Տարեցներու Տարուան» նուիրուած ձեռնարկին:

Նկատի ունենալով, որ այդ օրը Վարագայ Ս. Խաչի տօնն էր, Առաջնորդ Սրբազանը իր պատգամին մէջ անդրադարձաւ այս տօնին ծնունդ տուած պատմական հրաշալի դէպքերուն. ան վեր առաւ քրիստոնեայի կեանքին մէջ Խաչի հզօր ներգործութիւնը եւ հաւատացեալները յորդորեց աղօթքով շարունակելու քրիստոնեական կեանքի իրենց ուղեւորութիւնը, վստահիլ Աստուծոյ կամքին եւ միշտ յիշել, թէ մեր Տէրը ինչպիսի զոհողութիւն յանձն առաւ մեր փրկութեան համար խաչը բարձրանալով:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց եկեղեցւոյ Զովիլին՝ Տ. Վահան Քնյ. Կոստանեանի, հոգաբարձութեան եւ Քրիստոնեական Դաստիարակութեան յանձնախումբի նուիրումն ու ճիգերը, յատկապէս անդրադառնալով այն հանդիսութեան, որ նախատեսուած էր Ս. Պատարագէն ետք: Առաջնորդ Սրբազանը մէջբերումներ կատարեց Տարեցներու Տարուան նուիրուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հայրապետական պատգամէն եւ կոչ ուղղեց, որ սեր, յարգանք եւ հոգածութիւն ցուցաբերին մեր տարեցներուն, ականջալուր ըլլանք անոնց թելադրանքներուն ու խորհուրդներուն: Ան գոհունակութիւն յայտնեց, որ Տարեցներու Տարուան նուիրուած ձեռնարկով, այս եկեղեցւոյ զաւակները կ'ընդառաջեն Վեհափառ Զայրապետի պատգամին:

Ս. Պատարագէն ետք, նախաձեռնութեամբ Զոգաբարձութեան եւ կազմակերպութեամբ Եկեղեցւոյ Քրիստոնեական Դաստիարակութեան Յանձնախումբին, «Զայ Տարեցներու Տարուան» նուիրուած յատուկ ձեռնարկ մը տեղի ունեցաւ Եկեղեցւոյ սրահին մէջ, պատուելու համար գաղութի 70 տարիքը ամբողջացուցած տարեցները: Ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը: Զանդիսութիւնը հովանաւորեց Տիար Յովհաննէս Պուլատեան, ի յիշատակ իր տիկնոջ՝ Արաքսիի:

Պարմանուհի Ֆադէն Գասապեան երգեց Ամերիկեան եւ Զայկական Զայլերգները: Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը հրաւիրեց Առաջնորդ Սրբազան Զայրը, որ աղօթքը կատարէ եւ



իր հայրական խօսքը փոխանցե՛լ ներկաներուն: Առաջնորդ Սրբազանը շեշտեց, որ երախտապարտ պետք է մտադրե՛ք մեր ծնողներուն եւ մեծ ծնողներուն, որոնք արժանի են մեր սիրոյն, յարգանքին եւ հոգածութեան, որովհետեւ անոնց կը պարտինք մեր վայելած բարիքները: Ան նաեւ գնահատեց այն սերունդները, որոնք Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ համայնքը կերտեցին, եւ իրենց յարատեւ ջանքերով եկեղեցին բարգաւաճ պահեցին: Սրբազան Հօր հրաւերով, ներկաները յոտնկայս ծափահարութիւններով իրենց երախտագիտութիւնը յայտնեցին երեցներուն:

Հաճելի անակնկալ մը վերապահուած էր երեցներուն. քանի մը թռռներ իրենց սիրոյ եւ երախտագիտութեան խօսքը արտայայտեցին իրենց սիրելի մեծ ծնողներուն: Ոմանք յիշեցին իրենց մանկութեան հաճելի դրուագները, եւ այն գուրգուրանքը, որ վայլած են իրենց կեանքի ընթացքին: Սրտի խորերէն արտայայտուած գեղեցիկ խօսքերը խորապէս յուզեցին բոլոր երեցները: Երկու տաղանդաւոր եղբայրներ՝ Գեորգ եւ Արմէն Աճէմեան, երգեցին երկու երգեր: Հոգաբարձութեան ատենապետ Տիար Վարուժան Տէր Սիմոնեան իր գոհունակութիւնը յայտնեց հանդիսութեան յաջողութեան համար, նաեւ յայտնեց թէ վստահութեամբ ներշնչուած է, թէ նոր սերունդը պիտի շարունակէ իրեն փոխանցուած աւանդը:

Յայտնենք, որ նոյն շաբաթավերջին, Ֆրեզնոյի մէջ տեղի ունեցաւ աւանդական «Փրփուր»ի տօնակատարութիւնը, կազմակերպութեամբ Հայ Մշակութային Հիմնարկութեան տեղւոյն մասնաճիւղին: Առաջնորդ Սրբազանը Շաբաթ երեկոյ այցելեց տօնակատարութեան վայրը եւ Գերպ. Տ. Միւռն Շ. Վրդ. Ազնիկեանի, Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ հովիւին եւ սարկաւազներու հետ միասին, կատարեց Անդաստանի արարողութիւն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

- ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԵՄՊԱՆ ՏԻԳՐԱՆ
ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԵՏ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան եւ Ազգային Վարչութեան ներկայացուցիչներ Երեքշաբթի, 30 Սեպտեմբեր 2014ին մասնակից եղան Լոս



Անճելլսի մէջ Հայաստանի հիւպատոսութեան կողմէ կազմակերպուած Հայաստանի անկախութեան 23րդ տարեդարձի տօնակատարութեան, որ տեղի ունեցաւ Կլէնտլի «Հիլթըն» պանդոկին մէջ, պաշտօնական ընդունելութեամբ մը, ներկայութեամբ Միացեալ Նահանգներու մօտ Հայաստանի նոր նշանակեալ լիազօր դեսպան Տիար Տիգրան Սարգսեանի: Առաջնորդ Սրբազանին կողքին, ներկայ էին Ազգ. Վարչութեան ատենապետ Տիար Վահէ Յովակիմեան, փոխ ատենապետ Դոկտ. Տիգրան Պապիկեան եւ գանձապահ Տիար Միեր Տէր Յովհաննեսեան, ինչպէս նաեւ կազմակերպութեանց ու միութեանց ներկայացուցիչներ:

Իր սրտի խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը շնորհաւորանքի ջերմ արտայայտութիւն ունեցաւ Հայաստանի անկախութեան 23րդ տարեդարձին առիթով, ողջունեց դեսպան Տիգրան Սարգսեանի Լոս Անճելլս առաջին այցելութիւնը եւ վերահաստատեց մեր գաղութի սրտակցութիւնն ու զօրակցութիւնը՝ Հայաստանին, հայրենի պետութեան ու ժողովուրդին: Ան նաեւ աղօթք բարձրացուց առ Աստուած, որ պահպանէ մեր մայր հայրենիքը. «Տէր, զօրացո՛ւր ու անսասան պահէ քու բարութեամբդ վերականգնած Հայոց Հանրապետութիւնը: Օրհնէ՛ անոր Եռագոյն նուիրական դրօշը, օրհնէ՛ բոլոր անոնք, որոնք մեր հայրենիքի իշխանութեան պատասխանատուութեան կոչուած են, անոնց շնորհէ իմաստութիւն, եւ խոհեմութիւն պարգեւէ, որպէսզի խոհական իմաստութեամբ եւ արդարութեամբ առաջնորդեն եւ կառավարեն արդարութեան եւ խաղաղութեան այնքան ծարաւի մեր ժողովուրդը: Մեր զօրավարներուն, զօրականներուն եւ զինուորներուն քաջութեան ու արիութեան ոգի պարգեւէ: Մեր մէջ սրբութեան եւ զգօնութեան սեր եւ իմաստութիւն արմատացուր՝ յօժարակամ կատա-



րելու համար մեր պարտաւորութիւնները եւ մեր ազգին օգտակար բոլոր աշխատանքները»: Ան յիշեցուց, որ «այս մաղթանքով, տասնամեակներ շարունակ, 1918ի Ա. Յանրապետութեան օրերէն, մենք աղօթեցինք Յայաստանի անկախութեան համար, եւ փառք Աստուծոյ, 23 տարիներէ ի վեր կը վայելենք վերահաստատուած մեր անկախութիւնը՝ իր Եռագոյն դրօշով: Թող Աստուած անսասան պահէ մեր հայրենիքը, մեր անկախութիւնը, եւ բարի տարեդարձ բոլորիս»:

Կեսօրին, Յայաստանի գլխաւոր հիւպատոսի հրաւերով, հիւպատոսարանին մէջ կազմակերպուած էր դեսպան Տ. Սարգիսեանի հետ հանդիպում մը, որուն ներկայ էին մեր գաղութի ներկայացուցչական դէմքերն ու հրաւիրեալներ: Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Դոկտ. Տիգրան Պապիկեան ներկան եղան հանդիպումին: Առաջնորդ Սրբազանը ողջունեց դեսպան Տիգրան Սարգսեանը, շնորհաւորեց իր նոր պաշտօնը եւ յաջողութիւն մաղթեց իր նոր առաքելութեան մէջ: Հանդիպումը առիթ եղաւ լսելու հիւր դեսպանին գեկուցական ելոյթն ու հարցումներ ուղղելու անոր, Յայաստանի ու առնչակից իրադարձութիւններու մասին: Դեսպան Տիգրան Սարգսեան անդրադարձաւ Յայաստան-Միացեալ Նահանգներ գործակցական յարաբերութեանց, ինչպէս նաեւ ՄԱԿի Ընդհանուր Ժողովի վերջին նստաշրջանին առջեւ Յայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի ծանօթ ելոյթին:

**ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԲԱՐՁ.
Տ. ՇԱԽԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ ՅԱՏՈՒԿ
ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆՄԲ ԱՅՑԵԼԵՑ ՄԵՐ ԹԵՄԸ**

Բ Ե Ր Ի Ո Յ
Թեմի Առաջնորդ
Բարձր. Տ. Շախան
Արք. Սարգիսեան
պ ա շ տ օ ն ա կ ա ն
ա յ ց ե լ ո թ է ա մ բ
Արեւմտեան մեր
Թեմը գտնուեցաւ
Հոկտեմբեր 9էն 20
օրերուն:

Հիւր Սրբազանին Լոս Անճելըս կեցութիւնը



առիթ եղաւ մօտէն ծանօթա նալու Սուրիոյ ու յատկապէս շրջանի հայութեան վերջին երեք տարիներու տագնապալի վիճակին, պատերազմական ծանրակշիռ դէպքերու հետեւանքներուն եւ անոնց դարմա-նումի ճիգերուն, որոնց մասնակից է ամբողջ հայութիւնը, Յայաստանէն մինչեւ սփիւռքեան մեր ափերը: Շահան Սրբազանը նաեւ հանդիպումներ ունեցաւ պատասխանատու մարմիններու, ներկայացուցչական դէմքերու եւ ժողովուրդին հետ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Թեմիս Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահը երեքշաբթի, 14 Հոկտեմբեր 2014ի երեկոյեան ժամադրավայրը եղաւ շրջանիս ներկայացուցչական դէմքերու եւ Բերիոյ Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Շախան Ա. Արք. Սարգիսեանի միջեւ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեանի հովանաւորութեամբ եւ հրաւերով այս ընդունելութիւնը կազմակերպուած էր ի պատիւ հիւր Սրբազան Հօր, զօրակցութիւն արտայայտելու համար Սուրիոյ տագնապահար մեր գաղութին եւ յատկապէս մեր վարժարաններուն: Ներկայ էին հոգեւորականաց դասու անդամներ, Հ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչներ, Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիգիճեան, Ազգային Վարչութեան անդամներ, Ազգ. Վարժարաններու տնօրէններ եւ դաստիարակներ, Ազգ. Առաջնորդարանի յանձնախումբերու անդամներ, Սուրիոյ Հայութեան Օժանդակութեան Մարմինի (SARF), քոյր կազմակերպութեանց եւ Հալէպի վարժարաններու շրջանաւարտից միութեանց ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ աւելի քան 100 ազգայիններ, որոնց շարքին հալէպահայեր:

Պաշտօնական յայտագիրին բացման խօսքը արտասանեց եւ հանդիսավարութիւնը կատարեց Ազգ. Վարչութեան փոխ-ատենապետ Դոկտ. Տիգրան Պապիկեան: Ան ողջունեց ներկաները եւ շնորհակալութիւն յայտնեց որ ընդառաջած էին հրաւերին, ապա, վեր առաւ Հալէպի մեր գաղութին բարերար դերը՝ Սփիւռքի կազմաւորման եւ ոգեղէն սնունդով պարենաւորման մէջ:

Յանուն Ազգային Վարչութեան, ողջոյնի խօսք արտասանեց ատենապետը՝ Տիար Վահէ Յովակիմեան: Ան նշեց, որ ամբողջ հայութիւնը



վերջին տարիներուն խոր մտահոգութեամբ կը հետեւի Սուրիոյ ու Յալէպի վիճակուած ահաւոր իրադարձութեանց, իսկ վերջերս, ցասումով ականջալուր եղաւ Տէր Զօրի Նահատակաց Յուշակոթողին ականահարման: «Ձեր կորուստը նաեւ մեր կորուստն ու ցաւն է, Սրբազան Յայր», ընդօժեց Տիար Վահէ Յովակիմեան, հաստատելով, որ Արեւմտեան մեր Թեմը վերջին տարիներուն, Թեմիս Առաջնորդ Սրբազանին գլխաւորութեամբ, ճիգ չէ խնայած աջակցութեան ձեռք երկարելու Սուրիոյ մեր հարազատներուն: «Պիտի շարունակենք կանգնիլ Սուրիոյ մեր հայրենակիցներուն կողքին», եզրափակեց ան:

Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիգրիճեան, Սուրիոյ հայութեան վիճակուած կացութեան լոյսին տակ, իր խօսքը կեդրոնացուց երեք գլխաւոր մտածումներու վրայ. քաջութիւն, տոկունութիւն եւ ազգային համահայկական կարեկցութեան ոգի: Ան նշեց, որ Շահան Սրբազանը մէկ մարմաւորումն է քաջութեան այն արժանիքին, որ ունի շրջանի հայութիւնը: Սուրիոյ մեր գաղութը ցուցաբերեց տոկունութեան աննկուն կամք ու ոգի, ապրեցաւ ու կ'ապրի ահաւոր պայմաններու մէջ, եւ պետք է գիտնայ, որ իր կողքին ունի մեզ ու ամբողջ հայութիւնը: Իսկ հայութեան միասնականութեան մէկ հարազատ արտայայտութիւնը կը տեսնուի մեր գաղութին մէջ, որուն բոլոր գաւակները, անխտիր, Թեմիս Առաջնորդ Սրբազանին առաջնորդութեամբ, զօրավիգ կանգնեցան եւ կը շարունակեն զօրակցիլ Սուրիոյ մեր հայրենակիցներուն: «Վստահ ենք, որ մեր գաղութը պիտի շարունակէ յոյս ներշնչել», եզրափակեց ան:

Գերշ. Տ. Եփրեմ Ս. Արք. Թապագեան կատարեց սեղաններու օրհնութիւնը: Ներկաները հետեւեցան Յալէպի իրականութիւններն ու դարոցներու կեանքը պատկերող ժապաւեններու: Ճաշէն ետք, Յալէպի հայկական վարժարաններու շրջանաւարտից միութեանց ա-նունով խօսք առաւ Տիգրիս Զարուկ Տէր Դաւիթեան: Ան յատկապէս ողջունեց Շահան Սրբազանին ներկայութիւնը, հաւաստեց, որ հայութիւնը մօտէն կը հետեւի ու քաջածանօթ է Սուրիոյ ծանրակշիռ դէպքերու զարգացումներուն, ու ձայնակցեցաւ այն արտայայտութեանց, թէ զօրակցական կեցուածքը պիտի մնայ անփոփոխ:

Սուրիոյ Յայութեան Օժանդակութեան Մարմինին անունով խօսք առաւ Տիար Վազգէն Մատենլեան: Ան ըսաւ, որ Սուրիոյ հայութեան

տառապանքներուն բաժնեկիցի զգացումները համակած են բոլորս, սակայն ատիկա բաւարար չէ, այլ անհրաժեշտ է գործնական աջակցութիւն ցուցաբերել: Իբրեւ նախկին տնօրէն՝ ինձի համար ցաւ է տեսնել եւ իմանալ, որ աշակերտներ դժուարութեան մատնուած են, հայկական վարժարան մը կրնայ փակման վտանգին տակ գտնուիլ, շարունակեց Տիար Վ. Մատենլեան, եւ հաւաստեց, որ Զալիֆօրնիոյ հայկական վարժարաններու աշակերտները հանգանակային արշաւներու պիտի դիմեն, գործնապէս զօրակցելու համար Սուրիոյ հայկական վարժարաններու իրենց ընկերներուն: Ան կոչ ուղղեց, որ մեր գաղութի գաւակները մասնակցին հանգանակային աշխատանքին:

Հանդիսավարը իրաւիբեց Թեմիս Առաջնորդ Սրբազանը, ուղղելու իր պատգամը: Առաջնորդ Սրբազանը իր խօսքը հիմնած էր երկու գլխաւոր մտածումի վրայ. ան նշեց, որ այս երեկոն սրտակցութիւն արտայայտելու եւ յուսալից ըլլալու առիթ է: Ան շեշտեց, որ սրտակցութեան ու ցաւի զգացումներուն պետք է ընկերացնենք գործնական զօրակցութիւնը: Ան հակիրճ ակնարկով մը պարզեց Շահան Սրբազանին ժամանումէն ետք արձանագրուած քայլերը, հաստատելով, որ ան յատուկ եւ նուիրական առաքելութեամբ մը կը գտնուի մեր Թեմը, Սուրիոյ մեր վարժարաններուն աշակերտներուն համար օժանդակութիւն ապահովելու նպատակով: Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Քեսապի Ուսումնասիրաց Միութեան, Յալէպի շրջանաւարտից միութիւններու եւ Սուրիահայերու ցարդ ցուցաբերած աջակցութիւնը, շնորհակալութեան ու գնահատանքի խօսք ուղղեց երեկոյթի հիւրընկալ ամուլին՝ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգաբարձութեան ատենապետ Տիար Կարօ Էշկիեանի եւ Տիգրիս Սօսիին: Վերջապէս, ան կոչ ուղղեց անսալու եւ ընդառաջելու SARFի բոլոր նախաձեռնութիւններուն ու զօրակցական արշաւներուն, «որովհետեւ Բերիոյ Թեմը քոյր թեմ է, ու սրտի պարտք ունինք մեր կարելին ի գործ դնելու եւ աջակցութեան հասնելու իրենց կարիքներուն»: Ապա, ան իրաւիբեց հիւր Սրբազան Յայրը արտասանելու իր սրտի խօսքը: Շահան Սրբազան շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսք ուղղեց իրեն հանդէպ ցուցաբերուած հիւրընկալութեան եւ զօրակցական արտայայտութեանց համար, յատկապէս շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին եւ Ազգային Վարչութեան, շնորհակալութեան խօսք ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ.



Արամ Ա. Կաթողիկոսին, որուն յանձնարարութեամբ ձեռնարկած է իր այժմու առաքելութեան: Ան հաստատեց, որ հայկական Սփիւռքը եւ մասնաւորաբար Միացեալ Նահանգներու հայութիւնը մեծ նպաստ տրամադրած է Սուրիոյ հայութեան, ուր սակայն կարիքը մեծ է:

Ան փառք տուաւ Աստուծոյ, որ կարելիութիւնը ընծայած է տոկալու եւ կը պահպանէ յոյսը: Ան ընդհանուր գիծերու մէջ պատկերեց ժողովուրդի դաժան առօրեան, նշեց, որ Ազգ. Առաջնորդարանը քանիցս ռումբեր ստացած է ու անձնակազմը ստիպուած է քաղաքին մէջ դառնալ գաղթական. ժողովուրդը ամէն օր կը գտնուի մահուան վտանգի տակ, կ'արձանագրուին զոհեր ու վիրաւորներ, տարրական սննդանիւթի, ջուրի եւ ելեկտրականութեան տագնապները սուր են: Հակառակ այս ծանր վիճակին, ժողովուրդին մէջ վառ կը մնայ յոյսը եւ դիմադրական ոգին: Ամէնէն պերճախօս վկայութիւնը տուաւ Զեսապի հայութիւնը, որ երեք ամիսներու բռնագաղթէ եւ ծանր կորուստներէ ետք տուն վերադարձաւ եւ ձեռնարկած է վերականգնումի գործին:

Ան նշեց, որ Զեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ վերաշինութիւնը հրաշալի գործ է, եւ վստահութիւն յայտնեց, որ Հալէպի ու այլ շրջաններու հայութիւնն ալ նոյնը պիտի ընէ, անմիջապէս որ խաղաղութիւնը վերահաստատուի: Ան յատուկ կարեւորութեամբ վեր առաւ մեր վարժարաններուն դերն ու կարեւորութիւնը, ընդգծեց, որ հայ դպրոցը պէտք է բաց մնայ եւ շարունակէ մեր մշակոյթի օճախը ըլլալու իր վսեմ առաքելութիւնը:

Ան իր խօսքը եզրափակեց ընդգծելով, որ սփիւռքեան զօրակցութեան ականատես վկան ըլլալով, ի մօտոյ Հալէպ պիտի վերադառնայ այն հաւատքով ու հաւաստիքով, որ Սուրիոյ հայութիւնը առանձին ու անօգնական չէ. «Կեանքի դժուարութիւնները պիտի չընկճեն մեզ. պիտի վերականգնուին դարձեալ», շեշտեց ան, արժանանալով ներկաներուն յոտնկայս ծափահարութեան:

ԺՈՂՈՎՈՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Չորեքշաբթի, 15 Հոկտեմբեր 2014-ի երեկոյեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ ժողովրդային հանդիպում մը, Բերիոյ Թեմի Առաջնորդ եւ «Սուրիոյ Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Մարմին»ի ատենապետ Բարձր. Տ. Շահան Ս. Արք.



Սարգիսեանի հետ, ներկայութեամբ աւելի քան 600 հայորդիներու:

Ձեռնարկը կը վայելէր հովանաւորութիւնը Հայ Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական Յարանուանութեանց Հոգեւոր Առաջնորդներուն, եւ կազմակերպուած էր գաղութիս Սուրիահայութեան Օժանդակութեան Միացեալ Մարմինին եւ Սուրիահայ Վարժարաններու Շրջանաւարտից Միութեանց կողմէ:

Հանդիսավարն էր Տիկին Զեսար Գորթշեան, որ արտասանեց բացման խօսքը: Ձեռնարկի պաշտօնական բաժինին ընթացքին ողջոյնի եւ զօրակցութեան արտայայտութիւններով խօսք առին Սուրիահայութեան Օժանդակութեան Միացեալ Մարմինին կողմէ՝ փոխ ատենապետ Տիար Րաֆֆի Զէնտիքեան, Կաթողիկէ եկեղեցւոյ կողմէ՝ Հայր Թովմաս Կարապետեան, Հայ Աւետ. եկեղեցւոյ կողմէ՝ Պատ. Հենրիկ Շահնազարեան, Արեւմտեան Թեմի կողմէ՝ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան:

Յայտագիրը ուներ գեղարուեստական բաժին, կատարողութեամբ Լոս Անճելըս հաստատուած հալէպահայ աշակերտներու՝ Արագ Պալեանի եւ Նանօր Սերայտարեանի: Յուցադրուեցան տեսաերիզներ՝ Սուրիոյ հայ գաղութի վերջին տարիներու իրավիճակին մասին: Յայտագրի վերջընթեր բաժինով իր սրտի խօսքը փոխանցեց հիւր Սրբազանը, գլխաւորաբար կեդրոնանալով Սուրիահայութեան ներկայ իրավիճակին, անոր կարիքներուն եւ մասնաւորաբար հայ դպրոցի ներկայ իրավիճակին մասին:

Փակման խօսք արտասանեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը, որ ողջունելէ ետք հիւր Սրբազանին ներկայութիւնը, գնահատեց ձեռնարկի կազմակերպիչները եւ ներկայ զօրակցող ժողովուրդը, խոր մտահագութեամբ ցաւ արտայայտեց Սուրիոյ ու հայութեան վիճակուած տագնապալի կացութեան մասին եւ վերահաստատեց մեր գաղութի զօրակցութիւնն ու սրտակցութիւնը սուրիահայ հարազատներուն:



ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԹԵՄԻՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ



Թեմիս բարեխնամ Առաջնորդն ու հիւր Սրբազանը նաեւ այցելութիւններ տուին Թեմիս կարգ մը Ազգային Վարժարաններուն:

Ուրբաթ, 10 Հոկտեմբերի առաւօտուն, անոնք այցելեցին Ազգային Ռոգ եւ Ալեք Փիլիպոս Վարժարանը: Ճրդէն 12 դասարաններու աշակերտներն ու դաստիարակները հաւաքուած էին Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ, որուն մուտքին տեղի ունեցաւ դիմաւորումը: Երկու Առաջնորդները եկեղեցւոյ մուտքին կատարեցին հացի ու աղի օրհնութիւն: Մուտքին, առ ի յարգանք, սուրիահայ աշակերտներ թափօր կազմած էին: Առաջնորդներուն կ'ընկերանային Հոգշ. Ս. Պօղոս Արղ. Թինքճեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Ս. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան: Հաւաքական Տէրունական Աղօթքի արտասանութենէն ետք, հոգեւորականաց դասը աշակերտութեան ներկայացուց փունջ մը շարականներ, որոնցմէ ամենէն յատկանշականն էր «Որք Չարդարեցին» Թարգմանչաց տօսի նուիրուած շարականը: Երգեցողութեան աւարտին, տարբեր կարգերու աշակերտներ ներկայացուցին երգեր եւ բանաստեղծութիւններ:

Խօսք առաւ վարժարանի դաստիարակներէն Տիկ. Թամար Սերայտարեան, որ ողջունելէ ետք հիւր հոգեւորականները, յուզիչ կերպով իր աշակերտական յուշերը վեր բերելով, Թարգմանչաց խորհուրդով լի, յայտնեց, որ աշակերտները իրենց հոգեկան կապով կը միանան սուրիահայ մեր աշակերտներուն եւ պատրաստակամ են միշտ մասնակից ըլլալու Սուրիոյ հայութեան սրտակցութեան:

Գեղարուեստական յայտագիրի աւարտին, Առաջնորդ Սրբազանը իր պատգամը ուղղեց եւ յայտնեց, թէ Թարգմանչաց սերունդը Հայ ազգի ինքնութիւնն ու արժանիքները ամրապնդեցին եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի աթոռը աւելի հաստատուն դարձուցին հայ սեփական գիրերու գիտով եւ Ս. Գիրքի թարգմա-

նութեամբ: Սրբազան Հայրը կրկին անգամ շնորհաւորեց աշակերտները՝ ուսումնական նոր տարեշրջանին առթիւ, եւ զանոնք խրախուսեց ըլլալու Հայ լեզուի ջահակիրներ:

Ապա, Շահան Սրբազան բեմ հրաւիրուելով, նախ խօսեցաւ Թարգմանչաց տօսի խորհուրդին մասին, շեշտելով, որ իւրաքանչիւրիս տրուած այս աւանդը սրբութիւն մըն է, զոր պէտք է պահպանենք ու գործածենք, որպէսզի չըլլայ թէ անիկա մոռցուի: Ապա, սուրիահայութեան եւ ի մասնաւորի Սուրիոյ հայ աշակերտներուն մասին խօսելով, Սրբազանը պարզեց, թէ ինչպիսի դժուարին ու նեղ պայմաններու մէջ աշակերտներ տակաւին կը շարունակեն իրենց երթը: Հոգեւոր հայրերը, Ս. Խորանին առջեւ ծունկի գալով, երգեցին սրտառու «Տէր Ողորմեա» աղօթքը, որմէ ետք աշակերտներուն կողմէ փոխանցուեցան նուէրներ եւ փոխադարձաբար ստացան յուշանուէրներ: Ապա, Առաջնորդ Սրբազաններն ու ընկերակից հոգեւոր հայրերը ուղղուեցան մանկամտօր, որոնք մտերմիկ պահ մը բոլորեցին աշակերտներուն հետ: Տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանցում եւ մանկական երգերու եւ արտասանութիւններու ներկայացում: Սըրբազան հայրերը այցելեցին նաեւ չորրորդ ու հինգերորդ դասարանները, ուր աշակերտները ողջունեցին զոյգ Առաջնորդները եւ բանաստեղծութիւններով ճոխացուցին հանդիպումը: Աշակերտները Սրբազաններուն նուիրեցին իրենց ձեռագործ աշխատանքներէն:

Չորեքշաբթի, 15 Հոկտեմբերին, հիւր եւ հիւրընկալ Առաջնորդները այցելեցին Ազգային Ֆերահեան Վարժարան եւ հանդիպում ունեցան վարժարանի տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ աշակերտութեան հետ: Ներկայ էին Ս. Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Ս. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան, Ազգային Վարչութեան, եկեղեցւոյ հոգաբարձութեան, Հ.Յ.Դ. Մարմիններու եւ քոյր միութեանց ներկայացուցիչներ: Առաջնորդ Սրբազան Հայրերը դիմաւորեցին ճոր դասարանի աշակերտները եւ մէկ առ մէկ Սրբազաններուն աջը համբուրելով, ուղղուեցան դէպի իրենց աթոռները: Բացման խօսքով հանդես եկաւ վարժարանի հայերէնի ուսուցչուհիներէն Տիկին Թալին Գեորգ Ճանեցեան, որ բարի գալուստ մաղթելէ ետք հիւրերուն եւ ներկաներուն, հակիրճ կերպով ներկայացուց հիւր Առաջնորդ Սրբազանը, եւ անոր այցելութեան նպատակներուն մասին խօսելէ ետք, աւելցուց ըսելով. «Սրբազան Հայրը իր այցելութեամբ մեզի կը



պարգևէ յատուկ խորհուրդ մը, փոխանցելով իր հայրական պատգամներն ու օրհնութիւնները»: Ան աւելցուց. «Վարժարանը այս տարի ձեռնարկած է նոր դրամահաւաքի մը, որուն նպատակն է օժանդակել Սուրիոյ հայ աշակերտութեան եւ դպրոցներուն»:

Բացման խօսքէն ետք, տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր մը, որուն մասնակցեցան վարժարանի 7րդ կարգէն՝ Նանօր Սէրայտարեան, որ ջութակով նուագեց «Կռունկ»ը, 10րդ կարգէն՝ Նարեկ Գույումճեան, Սեւան Յանէշեան-Պետրոսեանի «Ես Չաւակն Եմ Զու Յողիդ» քերթուածի ասմունքով, 6րդ կարգի աշակերտները «Յաղթանակ» պարով ոգեւորեցին մթնոլորտը, եւ վերջապէս՝ 6րդ կարգէն Արագ Պալեան, Լորի Կարավարդանեան, Բալիկ Բէշիշեան եւ Երանիկ Պասթիլեան ասմունքեցին Յամաստեղի «Հայու Ոգին» բանաստեղծութիւնը:

Ապա, բեմ բարձրացաւ վարժարանի տնօրէնը՝ Տիար Ժան Գոսազեան: Ան, աշակերտութեան անունով յատուկ շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր այցելութեան համար, որ առիթ մըն է աշակերտութեան՝ մօտէն ծանօթացնելու Հալեպի հայկական դպրոցներու ներկայ իրավիճակին մասին: Իր խօսքի աւարտին, Սրբազան Հայրը Առաջնորդարանին կողմէ յուշանուէր մը փոխանցեց վարժարանին: Բերիոյ Թեմի Առաջնորդը, ողջունելէ ետք ներկաները, բարձր գնահատեց ազգային վարժարանի կրթութիւնն ու դաստիարակութիւնը, եւ աւելցուց ըսելով. «Վարժարանը շատ կարելոր դեր ունի հայկական կրթութիւնը եւ դաստիարակութիւնը շարունակելու եւ զօրացնելու դժուարին գործին մէջ»:

Հինգշաբթի, 16 Հոկտեմբերին, երկու Առաջնորդ Սրբազանները այցելեցին Ազգային Վահան եւ Անոյշ Շամլեան վարժարանը, որուն մուտքին, ջերմօրէն դիմաւորուեցան տնօրէնութեան, անձնակազմին եւ աշակերտներուն կողմէ: Առաջնորդ Սրբազաններուն կ'ընկերանար Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տոքթ. Տիգրան Պապիկեան: Վարժարանի տնօ-



րէնուհիին՝ Դոկտ. Թալին Զարկոտորեանի եւ փոխ տնօրէնուհիին՝ Տիկին Ռիթա Գաբրիէլեանի ընկերակցութեամբ, անոնք այցելեցին վարժարանի բաժանմունքները, ապա մուտք գործեցին հանդիսասրահը, ուր աշակերտները համախմբուած էին՝ հայրենասիրական երգերով ու արտասանութիւններով կազմուած զեղեցիկ յայտագիրով մը պատուելու յարգելի հիւրերը: Հայերէնի դաստիարակներէն Օր. Անի Պերպլեբեան արտասանեց ողջոյնի խօսք, հաստատելով, որ վարժարանը բազմաթիւ նախաձեռնութիւններու դիմած է, մասնակցութիւն բերելու համար Սուրիոյ հայութեան ու յատկապէս հայկական վարժարաններուն օժանդակութեան արշաւին: Ան հրաւիրեց աշակերտական խորհուրդի նախագահ Արա Եագուպեանը, որպէսզի աշակերտութեան անունով արտասանէ սրտի խօսք:

Ողջոյնի խօսք արտասանեց վարժարանի տնօրէնուհին, որ համոզում յայտնեց, որ յոյսը կը մնայ անմար եւ մեր ժողովուրդը պիտի շարունակէ զօրակից մնալ Սուրիոյ հայութեան. «Շամլեան վարժարանի ընտանիքը չի կրնար լուսանցքային դիրք բռնել ի տես այս պատահարներուն, մասնակցութիւն պիտի բերենք օժանդակութեան արշաւին եւ պատիւ կը զգանք Սուրիոյ հայութեան հետ միասնակալութեամբ»: Շահան Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ աշակերտներուն ու դաստիարակներուն կեցուածքին մասին, վեր առաւ հայ կրթական հաստատութեանց դերն ու կարեւորութիւնը՝ մեր մշակոյթի պահպանման եւ նոր սերունդի դաստիարակութեան գործին մէջ: Թեմիս Առաջնորդ Սրբազանը շեշտեց Շահան Սրբազանի աննախընթաց այցելութեան կարեւորութիւնը, բացատրելով, որ Հալեպի հայ աշակերտը ինչպիսի դաժան պայմաններու մէջ դպրոց կը յաճախէ: Ան հրաւիրեց աշակերտները միասնաբար բացազանջելու. «Մենք ենք սուրիահայ աշակերտները»: Աւարտին, Առաջնորդ Սրբազանը յուշանուէր մը յանձնեց վարժարանին: